# Ժ01.04 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

## ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

**Ընդհանուր մասնագիտական կրթամաս (75 հարց )**

1. Գրականագիտությունը՝ իբրև գիտություն, նրա հիմնական և օժանդակ բաժինները
2. Գրականության տեսության խնդիրները, ուսումնասիրման առարկան
3. Արվեստի տեսակները, դրանց դասակարգման հիմնական սկզբունքները
4. Տարածական արվեստների առանձնահատկությունները (ճարտարապետություն, քանդակագործություն, գեղանկարչություն)
5. Ժամանակային արվեստների առանձնահատկությունները (գրականություն, երաժշտություն)
6. Համադրական արվեստներ (պար, թատրոն, կինո)
7. Գրականությունը՝ իբրև արվեստի տեսակ, նրա յուրահատկությունը
8. Հասկացողություն գեղարվեստական պատկերի մասին. պատկերի բնորոշ գծերն ու տեսակները
9. Գրական պատկերման գլխավոր առարկան
10. Գրական երկի թեման (թեմատիկան) և գաղափարը
11. Թեմայի և գաղափարի միասնությունը գրական երկում
12. Գրական երկի սյուժեն, կառուցվածքը և բաղկացուցիչ տարրերը
13. Հասկացողություն գրական երկի կոմպոզիցիայի մասին
14. Կոմպոզիցիոն ձևերի և միջոցների բազմազանությունը գրական երկերում
15. Ստեղծագործության արտասյուժետային տարրերը, դրանց տեսակները
16. Լեզուն՝ իբրև գրական-գեղարվեստական պատկերման միջոց
17. Բառապաշարի առանձնահատուկ շերտերը գրական երկում (հնաբանություններ, բարբառային բառեր, օտարաբանություններ, նորաբանություններ)
18. Լեզվի պատկերավորման բառային միջոցները (մակդիր, համեմատություն, փոխաբերություն, փոխանունություն)
19. Շրջասություն, հեգնանք, այլաբանություն, խորհրդանիշ
20. Լեզվի պատկերավորման շարահյուսական միջոցները
21. Չափածոյի և արձակի հիմնական տարբերությունները. չափածոն՝ իբրև գեղարվեստական խոսքի հատուկ տեսակ
22. Տաղաչափական հիմնական համակարգերի ընդհանուր բնութագիրը. չափական ոտանավոր
23. Հայկական վանկական ոտանավորի բնութագիրը, վանկական ոտանավորի տեսակները
24. Վանկաշեշտական ոտանավոր
25. Համաշեշտ և ազատ ոտանավորներ
26. Բանաստեղծության կայուն ձևերը, տաղ հիմնական տեսակները

27. Գրականության բաժանումը սեռերի և ժանրերի. դրանց տարբերակման հիմնական սկզբունքները
28. Էպիկական սեռի բնութագիրը, էպիկական կերպար
29. Քնարական սեռի բնութագիրը, քնարական հերոս
30. Դրամատիկական սեռ, դրամատիկական կոնֆլիկտի և սյուժեի բնույթը
31. Էպիկական հիմնական ժանրերի բնութագիրը
32. Քնարական ժանրեր, դրանց բնութագիրը
33. Դրամատիկական ժանրեր (ողբերգությունմ կատակերգություն, դրամա)
34. Քնարաէպիկական ժանրեր (պոեմ, բալլադ, առակ)
35. Գեղագիտական միտքը Հին Հունաստանում (Հերակլիտ, Դեմոկրիտ, պյութագորականներ)
36. Սոկրատեսի գեղագիտական հայացքները. օգտակարի և գեղեցիկի նույնականացումը Սոկրատեսի գեղագիտության մեջ
37. Պլատոնի գեղագիտական հայացքները
38. Արիստոտելի «Պոետիկան» և նրա նշանակությունը գեղագիտական մտքի պատմության մեջ
39. Արիստոտելը միմեսիսի և կատարսիսի մասին
40. Միջնադարյան գեղագիտության առանձնահատկությունները
41. Վերածննդի գեղագիտությունը
42. Կլասիցիզմի գեղագիտության առանձնահատկությունները
43. Եռամիասնության օրենքը և ժանրային հիերարխիան կլասիցիզմի գեղագիտության մեջ
44. Նիկոլա Բուալոյի «Քերթողական արվեստ» տրակտատը
45. Լուսավորական շրջանի գեղագիտության առանձնահատկությունները (Բաումգարտեն, Վինկելման)
46. Դ. Դիդրոյի գեղագիտական հայացքները. Դիդրոն թատրոնի և դրամատուրգիայի մասին
47. Ռուսսոյի գեղագիտական հայացքները
48. Հ. Լեսինգի գեղագիտական հայացքները
49. Արվեստի տեսակների դասակարգումը Լեսինգի «Լաոկոոն»-ում
50. Կանտի գեղագիտական հայացքները. գեղեցիկի տեսությունը Կանտի գեղագիտության մեջ
51. Հեգելի «Էսթետիկան» և նրա դերը գեղագիտական մտքի պատմության մեջ
52. Հեգելը արվեստի տեսակների, արվեստի զարգացման շրջափուլերի մասին
53. Սենտիմենտալիզմի գրական ուղղությունը, նրա հիմնական սկզբունքները
54. Ռոմանտիզմի գեղագիտության առանձնահատկությունները
55. Ստեղծագործական ազատության սկզբունքը ռոմանտիզմի գեղագիտության մեջ
56. Ռեալիզմի մեթոդը, նրա առանձնահատկությունները
57. Կերպարաստեղծման սկզբունքները ռեալիստական և ռոմանտիկական մեթոդներում
58. 19-րդ դարի գրականագիտական դպրոցների ընդհանուր բնութագիրը

59. Դիցաբանական դպրոց, նոր դիցաբանական դպրոց
60. Պատմահամեմատական մեթոդը գրականագիտության մեջ
61. Կուլտուր-պատմական դպրոցի առանձնահատկությունները. Տենի «Արվեստի փիլիսոփայություն» աշխատությունը
62. Կենսագրական մեթոդը գրականագիտության մեջ. Սենտ-Բյովի տեսությունը
63. Հոգեբանական դպրոցի սկզբունքները
64. Նատուրալիզմի գեղագիտությունը. Է. Զոլան գրականության մեջ կյանքի պատկերման սկզբունքների մասին
65. Սիմվոլիզմի գեղագիտության առանձնահատկությունները
66. Էկզիստենցիալիզմ
67. Իմպրեսիոնիզմ, էքսպիրեսիոնիզմ, սյուրռեալիզմ
68. Ֆուտուրիզմի գեղագիտության առանձնահատկությունները
69. Գեղարվեստական մեթոդի հասկացությունը. մեթոդի տարբեր ըմբռնումներ
70. Գեղեցիկի գեղագիտական կատեգորիան, նրա համընդհանրական բնույթը
71. Գեղեցիկը կյանքում և արվեստում
72. Վեհի գեղագիտական կատեգորիան
73. Ողբերգականի գեղագիտական կատեգորիան, նրա մարմնավորման սկզբունքները արվեստում
74. Կոմիկականի գեղագիտական կատեգորիան
75. Կոմիզմի դրսևորման տարաբնույթ ձևերը արվեստում

**Լրացուցիչ մասնագիտական կրթամաս (25 հարց)**

1. Գաղափար արվեստի ձևաբանության մասին
2. Արհեստի և արվեստի տարբերակման սկզբունքները ըստ Ջ. Քոլլինգվուդի
3. Դիոնիսյան և ապոլոնյան սկիզբները արվեստում՝ ըստ Ֆ. Նիցշեի
4. Սինկրետիկ (միաձույլ) և սինթետիկ (համադրական) արվեստներ
5. Արվեստների դասակարգման ժամանակակից ձևերի բազմազանությունը
6. Գրականագիտական դասական դպրոցների ընդհանուր բնութագիրը (պոետիկա, հերմենևտիկա, սոցիոլոգիա, ֆենոմենոլոգիա)
7. Կուլտուր-պատմական դպրոցի հայ ներկայացուցիչները
8. Ա. Տերտերյանը հոգեբանական դպրոցի հետևորդ
9. Հասկացողություն գեղարվեստական տեքստի մասին
10. Տեքստի բազմապլանայնությունը. «շրջանակ» և «աղմուկ»
11. Գեղարվեստական տարածություն և ժամանակ. քրոնոտոպի խնդիրը գրական տեքստում
12. Ազգային մտածողություն և գեղարվեստական պատկեր
13. Ազգային տարրերի ներմուծման ձևերը գրական ստեղծագործություն
14. Ժամանակակից տեսությունները գեղարվեստական մեթոդի վերաբերյալ
15. Դեկադենս, ավանգարդիզմ, մոդեռնիզմ
16. Մտքի հոսքի գրականություն՝ ոճ, մեթոդ, տեխնիկա կամ ժանր

17. 20–րդ դարի գեղարվեստական հոսանքների փիլիսոփայական և տեսական նախահիմքերը (Ս. Կիերկեգոր, Ա. Շոպենհաուեր, Ֆ. Նիցշե, Զ. Ֆրոյդ, Կ. Յունգ)
18. Նարատոլոգիան՝ իբրև գրական տեքստի կառուցվածքաբանական վերլուծության մեթոդ
19. Պատում և նկարագրություն, պատմությունը և դիսկուրս
20. Պատմողական երկերի կառուցվածքային մակարդակները
21. Ժամանակի պատկերման առանձնահատկությունները պատումային երկերում
22. Հեղինակի խնդիրը նարատոլոգիայում
23. Ընթերցողի խնդիրը գրականագիտության մեջ
24. Դիտանկյան խնդիրը գրականագիտության մեջ
25. Դիտանկյան տարբեր պլաններ (տարածաժամանակային, գաղափարական, լեզվական, ընկալողական)